

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, ԱՊՐԻԼ 19, 1930

ԹԻԻ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀԲԸ ԿԵԱՆՔ Է

ՏՐ. Ֆ. Ֆ. ԿՈՒՏՄԷԼ

ՅՕԴՈՒԾՆԵՐ

Ի ՅԵՇՍԱԿ ՕՐ. Ա. ՃԼՊԷՃԵԱՆԻ

ՓՐՈՖ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ

ԴՐԻՍՏՈՍ ԵՒ ԱՆՀԱՏԸ

ՎԵՐ. Յ. ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

ՌՇՏՈՒՆԻ

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ՏԻԿ. Ա. ՇԻՐԱՃԵԱՆ

ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ Պ. ԱՅՐԷՍԻ ՄԷՋ

ՊԷՅՐՈՒԹԻ Ք. Զ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՒԼԵՃ» ՀԱՆԷՊ

Տիարք Յրթ. Սրապիոնեանի, Սեդ-
րակ Մանուկեանի և Սամուէլ Նահա-
պետեանի ջանքերով Հալէպի Քէմբի Ե-
կեղեցիին և Կոյրերու վարժարանին մի-
ջև հաւասարապէս բաժնուելու համար
31 և 6/16 անգլիական ոսկի հանգանակ-
ուած է Պուէնսոս Այրէսի մէջ լնակող բա-
րեկամներէն, որոնց ցանկը ստորեւ տըր-
ուած է:

Յանուն կարօտեալներու մեր մաս-
նաւոր շնորհակալութիւնները կը յայտ-
նենք այս սրտաբուղիս նուէրին մասնա-
կցող ամէն մէկ բարեկամի:

(վեր.) ԿԱՐԱՊԵՏ ՔԷԹԷՆՃԵԱՆ

(վեր.) ՍԻՍԱԿ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՔԱՂԱՔ	ԱՆՈՒՆ	ՓէՍՕ
Կեսարիա	Եղուարդ Պալեան	10
»	Թորոս Նալճեան	5
»	Տ. Եռսիֆեան	2
»	Յովհաննէս Պալեան	5
»	Սարգիս Թագէտեան	2
»	Կարապետ Հճ. Պալեան	5
»	Յարթ. Կարապետեան	1
»	Յարութիւն Սարաֆեան	5
»	Սարգիս Գազէզեան	3
»	Հայկազուն Գուլումճեան	5
»	Գէորգ Ապաճեան	2
»	Գառնիկ Փազլեան	1
»	Տիկ. Նարգիսէ Սարը Գու- լումճեան	5
Կ. Պոլիս	Լևոն Ս. Թովալեան	10
»	Միւսիւ Պօս Ալաճաեան	1
Հաճըն	Ռուբէն Սարայտարեան	2
»	Տուտուչեան	2
»	Կարապետ Տրդատեան	1
»	Հայրապետ Չօլագեան	2
»	Յովհաննէս Մանուկեան	5
»	Աւետիս Գուլումճեան	2
»	Պօղոս Չօլագեան	2
»	Կարապետ Մակարեան	2
»	Մանուկ Չաթալպաշեան	3

Եօզղաթ	Հայկազուն Չալլագեան	5
»	Հայկ Ճիվէլէկեան	10
Մարաշ	Մինաս Փիլիպոսեան	3
»	Իսկէնտէր Նահապետեան	3
»	Յովհաննէս Անապօնեան	1
»	Ճրնպեան Պիրատէրլէր	5
»	Երուանդ Կէօյօզլուեան	5
»	Մովսէս Աստուրօզլուեան	3
»	Ճիվէրլիմեան Պիրէտէրլէր	5
»	Մովսէս Նալճեան	5
Մարաշ	Յակոբ Նալճեան	5
»	Սարգիս Երլանկէօզեան	1
»	Հրանդ Մնջիրեան	2
Այնթապ	Մանուէլ Գէորգեան	5
»	Եազուպ Էքմէքճեան	1
»	Գասպար Փաթանեան	5
»	Պարզ Լ Միսիրեան	10
»	Թէրզեան Պիրատէրլէր	5
»	Օննիկ Պօտուրեան	3
»	Նշան Գուլումճեան	2
»	Լկրտաշէս Մալէզեան	2
»	Դրիգոր Գաբրիէլեան	2
»	Մարտիրոս Գուլումճեան	5
Թարսուս	Յարութիւն Մանուկեան	5
»	Բենեամին »	5
»	Տիկ. Վարտէ »	4
Հասանպէյլի	Յակոբ Փանոսեան	2
»	Դաւիթ Գունտագճեան	5
Ինճէ-Սու	Իսրայէլ Գարալէօզեան	2
»	Մարտիրոս Կէօզլէնեան	2
»	Կարապետ Թորոսեան	1
»	Նշան Սարգիսեան	2
»	Յարութիւն Մնաքեան	2
»	Միքայէլ Սարթանեան	3
»	Յովհաննէս Մարգարեան	20
»	Խաչեր Մարտոյեան	10
»	Աբրահամ Պէտոյեան	5
Գոնիա	Իզմիրլեան Պիրատէրլէր	10
»	Լուսին Պալեան	1
»	Ուրումտէյէն Միհրան Խաչերեան	5
»	Յովհաննէս Գալֆաեան	4
Մալաթիա	Սեդրակ Չօլագեան	3
»	Գրիգոր Սիրանեան	10
	(Շարունակելի)	

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԵՊ, ԱՊՐԻԼ, 19, 1930

ԹԻԻ 8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀՔԸ ԿԵԱՆՔ Է

Վերացուցիչ պահ մը կ'ապրիս Երուսաղէմի մէջ Զատիկի առաւօտը ապրիլի, բայց ոչ Յարութեան տաճարին շուրջը խռնուած Արեւելացի ուխտաւորներու աղմկող ամբոխին մէջ, եւ ոչ ալ հին եւ նեղ փողոցներու մէջէն երկրորդական ուխտատեղիներու երթալու ատեն, այլ Զրիենեաց Լերան վրայ:

Քաղաքը ոտքերուս տակը տարածուած է: Մէկ ակնարկով կրցայ տեսնել իրարմէ բաւական հեռու գտնուող տեղեր, պարիսպներէն դուրս Կորտոնի Գողգոթային մօտակայ կանաչ բլուրը (Կորտոն կը կարծէ թէ Յիսուոյ խաչելութիւնը հոս կատարուեցաւ: Մ. Սմբ.), Սողոմոնի Տաճարը եւ Կեդրոնի ձորը որ հին Դաւիթի քաղաքին ժողովուրդական ստորոտը կ'երկարի: Քրիստոս յաճախ այս կէտէն դիտած պէտք է ըլլայ քաղաքը: Աստուծոյ կանուխ ելայ արշալոյսը ծաթեղուն պէս բացօղեայ տեղ մը առանձնանալու, ինչպէս որ ան սովոր էր: Անոր հետեւելով ուղեցի ես ալ Անոր մօտածումներէն ոմանք խորհիլ, որ Անոր հոգին կատարելապէս զիս լիցնէ, որ ես առաջին Զատիկի առտուան ուրախաբեր յուզումը ապրիմ:

Այդ պահուն (Ապրիլ 1928) իմ հոգեկան ապրումներուս ընթացք տուող ազդակն էր ժողովի այն նիստերը որոնց մէջ «Քրիստոնէական Պատգամ»ի մեծ յայտարարութիւնը ծնունդ առած էր: «Մեր պատգամը Յիսուս Քրիստոս է: Անիկա իր անձին մէջ կը յայտնէ ինչ որ

Աստուած է եւ ինչ որ մարդ վերջապէս կրնայ ըլլալ...: Անիկա իր կեանքին մէջ, իր մահուամբ եւ յարութեամբը մեզի ցուցուցած է Հայրը, Գերագոյն Իրականութիւնը, իբր ամենակարող Սէր, որ խաչի միջոցաւ աշխարհը իրեն հետ կը հաշտեցնէ, մարդոց հետ կը տառապի մեղքի եւ չարիքի դէմ անոնց մղած պայքարին մէջ, անոնց հետ եւ անոնց համար կը կրէ մեղքի բեռը, անոնց կը ներէ երբ անոնք ապաշխարութեամբ եւ հաւատքով իրեն կը դառնան ներողութեան ոգին ունենալով իրենց խել սըրտերուն մէջ, եւ վերջապէս նոր մարդկութիւն կ'ստեղծէ միշտ մեծցող, միշտ ընդարձակուող եւ մշտնջենական կեանքի մը համար:»

«Նորէն մարդկութիւն ստեղծել», աւսիկա իրապէս բարի լուր մըն է, անիկա բարի լուր մըն է քանզի անիկա ճշմարիտ է եւ անիկա այնչափ բարի լուր մըն է որչափ որ էր ասկէ 1900 տարիներ առաջ: Աստուծոյ Շնորհիւ կեանք է: Կեանքը Աստուծոյ շնորհքն է: Աստուծ է շնորհողը: Իրականին մէջ շնորհք է ինչ որ Ան կուտայ: Անիկա ջանքի կամ արժանիքի փոխարէն չի կրնար ստացուիլ: Անիկա շնորհք մըն է: Զթողունք որ բառերը մեր մօտածումներուն արգելք ըլլան: Բառերը պէտք չէ որ մեզ պայթակղեցնեն: Մենք հրաւիրուած ենք մեր սրտերուն ինչպէս նաեւ մեր մտքերուն աչքերովը ըմբռնել թէ Աստուծոյ շնորհքը կեանք է: Զատիկի առաւօտը չէր կրնար մեզի բերել ասկէ աւելի մեծ օրհնութիւն մը: Եւ ասկէ պակասն ալ բերելու չէ. «Կեանքը անով էր»:

Միտքս այսպիսի խորհուրդներով

գրգռուած մինչ Զիթենեաց լեռնէն Երուսաղէմը կը դիտէի, սկսայ իմենոր Կտակարանիս էջերը դարձնել: Ամէն էջ կարծես թէ նոր լոյսով մը, իմաստով մը կը շողար: Ինծի թուեցաւ որ անոր սըրտին բանալին պտայ: Ոչ միայն Յովհ. 3. 16ի (Աստուած այնպէս սիրեցաշխարհը, մինչև իր միածին Որդին տուաւ...), Հռովմ. 6. 23ի (Քանզի մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրով Յփ. Քրիստոսի ձեռքով) նման ծանօթ համարները, այլ նաև Բ. Պետ. 1. 3ի (Իր աստուածային զօրութիւնը կեանքի վերաբերեալ ամէն բաները մեղի տուաւ...) եւ Հռովմ. 8. 21ի (Ստեղծուածները իրենք ալ ապականութեան ծառայութենէն ազատելով Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեան պիտի հասնին) նման մութ տողերը Աւետարանի սխիւթօնիին ներդաշնակութեան մէջ մէկ ձայնանիշեր ըլլալ թուեցան: Աւելին կայ: Ժամանակի լրումին Յիսուսի գալուստովը Խորայէլի պատմութեան բոլոր ընթացքը նոր պատկերով մը ինծի ներկացաւ՝ երբ անոր մասին խորհեցայ Զատիկի առտուան պատգամին լոյսովը: Յարուցեալ Քրիստոսը իր անձաւորութեան մէջ կ'ամփոփէ Աստուածային ձրի պարգևին լեցունութիւնը, այն պարգևի որ կեանք է ինծի եւ բոլոր մարդերուն:

Այո, բոլոր մարդերուն համար: Սկըսայ խորհիլ թէ Գողգոթան եւ Զիթենեացը ի՞նչ կը նշանակեն արդի միսիօնարական շարժումին համար: Սկսայ հանդարտօրէն եւ բարձրաձայն ինքիրենս յիշել անունները այդ Ժողովին պատուիրակներէն ոմանց, որոնց հոս հոն կը հանդիպէի եւ որոնց հետ միասին կը նըստէի ժողովասրահին մէջ: — Հնգկաստանէն Ահմէտ Շահ եւ Շէնշլիյա, Ֆիլիպեան կղզիներէն Պոգոպօ, Պրազիլէն Պրակո, Հար. Ափրիկէն Ճապավու, Գորէայէն Գիւմ եւ Բիանկ, Զինաստանէն Զաօ եւ

Չէնկ, Պուրմայէն Պա, Ճաբոնէն Գողաքի եւ Ուզաքի, Մատակաքարէն Բանձուփուա, Սուրիայէն Սուպիյէ, Եգիպտոսէն Շէյխ Տըվէյրի եւ ուրիշ շատեր: Այդ զէմքերը, այդ ձայները, այդ հոգիները հոգեւոր ընկերակցութեան մը մէջ իրարու խառնուելով նոր իմաստ մը տուին Քրիստոսի յայտնած իրողութեան: Այդ մարդերը եւ կիները եւ անոնք զոր իրենք կը ներկայացնէին սկսած էին բաժին ունենալ Աստուծոյ շնորհքին մէջ որ կեանք է: Անոնք սիրով պատրաստ էին բոլոր երկիրներու մէջ Աստուծոյ զաւակներուն հետ ոյժերը միացնելու որպէսզի Յիսուս ճանչցուի: Ես խորապէս տպաւորուեցայ երբ այս բարեկամներու մասին խորհեցայ, որոնք կ'ըմբռնէին թէ Քրիստոս կատարելապէս իրենց ալ կը յարմարի եւ իրենց ալ սեպականութիւնն է: Անոնք Քրիստոսը իւրացուցած են, որ Աստուծոյ իրենց տուած ձրի պարգեւն էր, ինչպէս որ Ան տուած էր զայն առաջին դարու Հրեաներուն Պաղեստինի մէջ: Քրիստոսի տիեզերականութիւնը ցուցնելու համար հազիւ կրնամ աւելի ուշադրաւ օրինակ մը պատկերացնել քան Երուսաղէմի Ժողովը: Եւ սակայն այդ հաւաքոյթն իսկ շատ տկար կերպով կը պատկերացնէ թէ ներկայիս աշխարհի վրայ Քրիստոս որչափ մեծ ազդեցութիւն ունի իրականին մէջ: Անոր խաչն ու յարութիւնը Երուսաղէմի մէջ ներկայացուած ժողովուրդներուն ոչ միայն կենդանի յոյսը կը կազմեն, այլ նաև Անոր մէջ կեդրոնացած են աշխարհիս բոլոր մեծ յոյսերը ճարտարարեւոյտի մէջ արդարութեան եւ բարեւորութեան համար, կատարեալ միջազգային ըմբռնումին համար եւ տեւական ու արդիւնաւոր խաղաղութեան համար:

Որչափ եւ յարուցեալ Քրիստոսով Աստուծոյ շնորհած կեանքի պարգեւը միայն աշխարհագրականապէս տիեզերական չէ, այլ տիեզերական է նաև ա-

մէն մակարդակէ մարդոց ամէն պարագաներու տակ ամենախորոշակ պէտքերուն զոհացում տալու մէջ: Իբր իր հաւատարիմ աշակերտները դեռ նոր սկսած ենք կ'ընել զործին տարողութիւնը: Մարդկային գործունէութեան նոր մարդեր, որոնց Քրիստոս կեանք կրնայ շնորհել, մեր սրտին մէջ տեղ կը զբաւեն: Բոլոր աշխարհի վրայ զիւղական հարցեր, Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ աշխատաւորական պայմաններ, սուր հանգամանք առած ցեղային յարաբերութիւններ, կ'սպասեն որ Քրիստոսի ստեղծագործ հոգին իրենց մէջ ազատ մուտք գործէ: Այդ միայն կրնայ կեանք բերել, զոր կ'արժէ կեանք կոչել:

Տեսիլքը յոյս կը բերէ: Յոյսը հաւատարմութիւն կը ներշնչէ: Հաւատարմութիւնը ջանքը կը բազմապատկէ եւ ճշմարիտ սէր կը ծնի: Քրիստոս կ'երենայ եւ մենք կը տեսնենք թէ հասարակ Տէրոջ չէ որ կը ծառայենք: Կեանքի Տէրը մօտէն մեզմով կը հետաքրքրուի, մեր մէջը յարութիւն կ'առնէ, մեր առջեւ կ'երթայ, եւ իր անճառելի գեղեցկութեամբ ինքզինքը մեզի կը յայտնէ: Կ. Պոլիս, Յունի. 1930 ՊԻՏ Ֆ. ԿՈՒՏՈՒՆ

ՅՈՂՈՒԾՆԵՐ

ԱՐԱՐՄԱ ԶԷՊԷՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Անգլիոյ Սէլի Օգ Գոլէճներու նորաչէն հոյակապ որահին մէջ Նոյ. 27ին յիշատակութեան պաշտամունք մը կատարուեցաւ, եւ այս առթիւ այդ Գոլէճներու նախկին երկու սանուհիներու անուան, իրկու յուշարձաններ կանգնուեցան: Ասոնք երկու օրիորդներ էին որոնցմէ մին մեռած է Եւրոպայի մէջ, երբ մեծ ծառայութիւններ կը կատարէր, եւ միւսը մեր ամենուն սիրելի Արաքսիա Ճէպէճեանն էր, որ Տէր-Ձօրի անապատներուն մէջ նահատակուած է:

Ափսոս որ մենք մեր քրիստոնեայ հերոսները չենք գնահատեր, մինչ օտարները մեզմէ առաջ անոնց յիշատակը կը տօնեն: Հայ աղջկան մը համար պզտիկ յարգանք մը չէ Անգլիոյ մէկ Գոլէճին մէջ իր անուանով յուշարձան մը կանգնուիլը: Մենք ալ մասնակցինք յարգանքի այս ցոյցին, քանզի այդ յարգանքը կը պատկանի որքան Օր. Արաքսիային, նոյնչափ եւ անոր ծնունդ տուող ազգին: Յիրաւի, այդ ժողովին ներկայ գտնուող Անգլիացի բարեկամ մը, երբ վերջէն այդ ժողովէն իր առած տպաւորութիւններու մասին կը զրէր, ըսաւ. «Ամբողջ ժողովի տեսողութեան միջոցին զգացինք թէ ոչ միայն նահատակ աղջկան մը այլ եւ նահատակ ազգի մը յիշատակը կը տօնենք»:

Ժողովը բացուած է մեծ հարուստ էտվըրտ Քէտպլըրի նախադահու թեամբ եւ օրումն բանախօսը եղած է Տօքթ. Բէնեթի Հէրիս: Տր. Հէրիս՝ Անգլիոյ մեծագոյն գիտնականներէն մէկը, մեծ մարդ մըն է, թէ՛ իրրե գիտնական եւ թէ՛ իրրե Քրիստոնեայ: Ասիկա այն մարդն է, որ 1895ի ջարդերէն անմիջապէս ետքը իր կեանքը վտանգի ենթարկելով Սլեքսանտըթէն սկսած մինչեւ Սե Ծովու եղերքները թուրքիոյ մէջ պատեցաւ. այս առթիւ Այնթապու հին մեծ եկեղեցիին մէջ խուռնեքամ բողոքական մը քարոզեց, Պէրէճիկի եւ Ուրֆայի մէջ արտաքին ճնշումի տակ մահմետականացած հայերը ազատեց: Այժմ 79 տարեկան առողջ ծերունի մըն է ան:

Տր. Հէրիս իր բանախօսութեան մէջ, Օր. Արաքսիայի հակիրճ մէկ կենսագրականը ընելէ ետքը, հետեւեալ կերպով աշտայայտուած է. «Նահատակութիւնը Քրիստոնէական եկեղեցիի մէկ յատկանիշն է, բայց տարբեր եկեղեցիներու նահատակներու ցանկը տարբեր է: Եթէ Հայ. Եկեղեցւոյ նահատակներուն մէկ ցանկը շինուէր, այդ՝ միւս բոլոր ե-

կեղեցիներու հաւաքական ցանկէն աւելի պիտի ըլլար: Ահաւասիկ Արաքսիա, Նահատակներու Մայրը եղող այսպիսի Եկեղեցի մը զաւակն է»:

«Արաքսիա մաքուր ընտանիքի մը պարզ մէկ աղջիկն էր: Ան գեղեցիկ էր, անոր բուն գեղեցկութիւնը, սակայն, իր Յիսուսի հետ ունեցած հաղորդակցութենէն յառաջ եկած էր: Անոր դէմքին վրայ Յիսուս կը փայլէր: Այն ամէն բաները որոնք կրնային արգիլել զինքը Յիսուսի հաղորդակցութենէն, մէկգի թողուած էին: Նաեւ այս նպատակով կոյս մնալ ուխտած էր: Հաւատքը եւ Քրիստոնէական քաջութիւնը երեւան կուգար անոր կեանքին բոլոր պարագաներուն մէջ: Գաղթականութեան ատեն կրնար իր զուլիս կերպով մը ազատել, բայց նախընտրեց իր ընտանիքին հետ տառապիլ եւ այսպէս սոսկալի աքսորանքի մը դառն բաժակը միազին քամիլու համար ճամբայ ելաւ: Թշուառութեան եւ հալածանքի ամէն տեսակներուն միասին հանդուրժեց եւ վերջապէս այդ ջարդերուն զոհ գնաց: Թերեւս ոչ մէկ մարդ Արաքսիայի չափ յաղթական հաւատքի զօրութիւն ցոյց չէ տուած: Օրհնեալ ըլլայ անոր յիշատակը:»

Արաքսիայի համար խօսուած այս խօսքերուն մենք ալ կը ձայնակցինք եւ կը յարգենք անոր քաղցր յիշատակը:

Բայց ինչո՞ւ Արաքսիա այսքան կը յարգուի, ո՞ւր է այդ յարգանքին գաղտնիքը: 1912ին, միայն վեց ամիս Վուտպրուք Դոլէճի մէջ Արաքսիա աշակերտ եղաւ. այս կարճ ժամանակը, սակայն, բաւական եղաւ որ ան այնքան սիրուի եւ յարգուի: Մենք իրեն հետ միասին էինք այդ տոնն եւ իր կեանքին ու նըկարողին մէջ մեր տեսած հետեւեալ կէտերը կ'ուզենք երեւան բերել:

1. Արաքսիա հեղահամայն էր եւ համակրելի ոգի մը ունէր: Ամէն մարդու հետ կրնար ապրիլ, կեանքի ամէն վի-

ճակին մէջ զոհուողութիւն ցոյց կուտար: Միշտ ուրախ եւ ժպտուն գէմք մը ունէր. սրտով խոնարհ էր: Պաշտօն մը որքան ալ հասարակ ըլլար, միշտ պատրաստ էր զայն ուրախութեամբ կատարելու: Խոհանոցի մը մէջ աշխատելը այնքան հաճոյալի եւ բնական էր իրեն համար, որքան հաջողութեամբ մը առաջնորդելը: Հակառակ իր բարձր կրթութեան եւ մտային կախողութիւններուն իր մէջ հպարտութեան եւ անձնասիրութեան ոգի չէր տեսնուէր: Ան միշտ պատրաստ էր որքան սորվեցնելու, նոյնքան սորվելու, որքան խօսելու, նոյնքան աշակերտի մը պէս ունկնդրելու: Իմաստակ չէր եւ այդ պատճառով կրնար ամէն մարդու հետ բարեկամ ըլլալ: Որքան թանկագին յատկութիւն մըն է այս եւ այսօրուան քրիստոնեաներուն մէջ որքան քիչ կը տեսնուի:

2. Արաքսիայի կեանքը բնական եւ խօսքերը պարզ էին: Քրիստոնէական կեանքը իրեն համար անբնական եւ արտաքին բան մը չէր: Քրիստոսը ճանչնալը չբաժնեց զինքը իր տունէն, ընտանիքէն, եկեղեցիէն եւ դպրոցէն: Անոր կեանքին մէջ արտասովոր բաներ չերեցան: Իրեն համար Քրիստոնէութեան նշանակութիւնն էր սիրել Քրիստոսը եւ սիրել մարդիկը: Մէրը, անոր կեանքին անոյշ հոտն էր: Ո՞վ չի հրապուրուիր այսպիսի կեանքէ մը: Որքան անգամներ հաւատացեալներու կեանքին եւ խօսքերուն մէջ տեսնուած կոշտութիւնը, ազդեցութիւնը, եւ մինչեւ անգամ ամբողջական բաներ պատճառ եղած են որ մարդիկ հեռանան Քրիստոսէ, Գիրքէն եւ Աստուծոյ: Սբ. Գրքին ամէնէն պարզ խօսքերն անգամ անոր բերնին մէջ նոր հրապոյր մը կ'ունենային: Շատ անգամներ մենք մեր ձեռքով, Քրիստոնէութիւնը ատելի կը դարձնենք: Արաքսիա ինչ որ կ'ընէր, անոր մէջ շնորհ մը կ'արտափայլէր:

3. Արաքսիայի կեանքին ամէնէն կարեւոր յատկանիշը, սակայն, անոր աւետարանչական ոգին էր: Անձնական փորձառութեամբ գիտէր Քրիստոսը եւ Աւետարանը եւ իր գիտցածը աւետարանելու եռանդովը լիցուած էր: Ան Քրիստոսի ճշմարիտ մէկ զործիչն էր եւ ասոր համար երբեք չէր ամչնար: Իր ամբողջ կեանքը, ժամանակը եւ ոյժը նուիրած էր Աւետարանի զործին: Որքան հազուագիւտ է այս ոգին մեր աղջկանց մէջ: Քրիստոսի սիրովը լիցուած, զԱյն աւետարանելու նուիրուած, եւ Անոր համար մեռնելու պատրաստ կիներու եւ աղջիկներու ո՛րքան մեծ կարիք կայ: Ո՛ւր են այսօր Արաքսիայի պէս փորձառու անկեղծ եւ մաքուր Քրիստոնեայ աղջիկներ: Մենք այսպիսիներու պէտք ունինք մեր եկեղեցիներուն եւ մեր ազգին մէջ, որպէսզի անոնք մահամերձ հոգիներուն կեանք տան:

Քրիստոսի մեծագոյն պարգևը, քրիստոսանման կեանք մըն է: Զայն մեր կեանքին մէջ ցուցնելու աշխատինք: Հեղութեան, խոնարհութեան, սիրոյ եւ քրիստոնէական ջանքի մէջ, օրէ օր մեր այս քրոջ հետեւինք: Փա՛ռք Աստուծոյ անոր կեանքին համար:

ԼՈՒԹՅՈՒՆ ԼԵՒՈՆԵԱՆ

ԱՆՀԱՏԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ

Յիսուս պայման դրաւ որ անհատը վերստին ծնի, որովհետեւ, ա՛յդ միջոցով միայն կարելի տեսաւ ընկերային յարաբերութիւնները իրենց կատարելութեան հասցնել. քանի որ. 1.—մարդկային ընկերութեան հիմը անհատն է եւ գետը իր սահանքէն վեր չի կրնար ելլել: 2.—Ազգերու ընկերութիւններու ապագայ փոխարաբերութիւնները չեն կրնար ճիշդ եւ անկեղծ ըլլալ. եթէ անհատներու փոխադարձ յարաբերութիւնները ճիշդ չըլլան, Մարդկային ընկերութիւն-

ներ չի կրնար կատարեալ ըլլալ, եթէ անհատները այնպէս չեն, 3.—Մարդոց բարձրացման համար, պայման է որ, ընկերութեան մէջ Աստուած եւ բարի մարդիկ մտնեն:

Յիսուս անհատին իբրեւ մարդ չատկարհորութիւն ընծալեց, բայց առանց նկատի առնելու անոր մասնայատկութիւնները, առանց կարեւորութիւն տալու անոր ցեղին, զօսակարգին, ուսման եւ սեռին. անհատը փրկելու եւ կաւ միայն եւ ոչ անհատները: Ուստի հարցումը սա չէր թէ՛ դու ի՞նչ ունիս, թէ՛ ինչ կրնաս ընել կամ ի՞նչ չես կրնար, հապա հարցը սա՛ է, թէ՛ դու ո՞վ ես: Ահա այս էր կարեւորը եւ հետեւեալ պատճառներով: 1. Որովհետեւ Աստուած էր որ ստեղծեց մարդը եւ իբրեւ որդի Աստուծոյ: Յիսուս չհարցուց թէ ինչո՞ւ եւ ի՞նչ պէս ստեղծեց զայն, անոր փիլիսոփայութիւնը չհազարկուեց զինքը: 2 Որովհետեւ մարդը բարդ արարած մըն է, մարմին, միտք եւ հոգի ունի: Երբեմն երկու մասի ալ կը բաժնէր Ան, մարմինը եւ հոգին: Մատթ. 10. 28. Ա. թեոաղ. 2. 23, Ա. Կորն. 15. 45—46: Եբր. 4. 12—13: 3.—Յիսուս զիտէր որ մարդը անհատական յատկութեանց տէր է, թէ այն՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած ըլլալով զիտակցութիւն ու կամք ունի եւ ազատ է: 4.—Անհատը ընկերական արարած մըն է եւ այդ կեանքին շատ յարմար: Հիշտ է փաստել ասիկա:

Յիսուս կը յարգէր իր անձը եւ կը պահանջէր որ ուրիշներ ալ յարգեն զինքը: Նմանապէս՝ Այն երբեք չքաջալերեց անհատը որ արհամարհէ իր սեպհական անձը եւ վատաստի: Հասկցուց որ՝ անհատին արժէքը իր մարդ ըլլալուն մէջ կը կայանայ եւ ոչ թէ եկեղեցիի մը, համայնքի մը եւ կամ ազգի մը մէկ անդամը ըլլալուն մէջ:

Յիսուս անհատի գերակայութեան

գաղափարին դէմ պայքարեցաւ եւ հաւաստութիւն հաստատեց: Մարդկային կեանքը սահմանաւորող ամէն կարգ ու սարքի դէմ էր Այն, կ'արգիլէր մենամարտը, պատերազմը, վտանգաւոր խաղերը եւ գինեմոլութիւնը. մարդոց մէջ յաւիտենականութեան ըմբռնումը կը զօրացնէր եւ կը հաւաստէր որ՝ անհատը անանց կեանքով օժտուած ըլլալով, դէպի այն առաջնորդուելու է: Ա. Տիմ. 6. 14, Մատթ. 10. 28, 22. 32:

Անհասկն և կարագիրը եւ կարեկիւրքիւն-ները: Ի՞նչոր Աւետարանիչներն ալ կ'ընդունին թէ՛ Ա. Մարգը մեղաւոր է: Մթ. 1. 21, Ղուկ. 5, 24, Հռոմ. 3. 10-19, Ա. Թեո. 2. 2, 4. 1, 4, 7, 14: Եւ այս մեղքը ունէ բան չի կրնար ջնջել: Բ. Յիսուս մեղքը չի սահմաներ թէ ի՞նչ է այն, բայց օրինակներով ցոյց կուտայ զայն. օրինակի համար, իր անձին հանգիստը փնտռող մեծատունը, աղահաւատը, անկարեկից բարբին եւ Ղեւտացին եւ այլն, ասոնք մեղքին մարմնացած նմոյշներն էին: Գ. Մեղքը երեք պատու կ'արտադրէ ընդհանրապէս, մարմնական ցանկութիւն, եսապաշտութիւն եւ անաստուածութիւն: Դ. Մեղքի ծագման մասին առաջին երեք Աւետարանիչներ բան մը չեն յայտնէր, բայց Յովհ. 8. 44, Հռոմ. 5. 12-21 եւ Ա. Կորն. 15. 47 համարներուն մէջ պարզուածին համաձայն, մեղքը մարդէն ծագում առաւ, իբր մնացորդ մը անոր անասնական կամ վայրենի կեանքէն: Ե. Մեղքը՝ գերի կը զարձնէ անհատը. Յովհ. 8. 32-36:

Այսուհանդերձ Քրիստոս կը հաւատարոր մարդ կրնար կատարելութեան հասնիլ, Պողոս ալ իր կեանքին փրկութեան կը հաւատար. Յովհ. 3. 4, Ա. Թեո. 4. 3-7, Հռոմ. 8. 18-25, Յայտ. 21 եւ 22 գլուխներ: Քրիստոնէական հաւատքը կը մերժէ այն վարկածը թէ՛ մարդոս նկարագիրը չի կրնար փոխելիւ: Ուստի կարեւորագոյն հարցը սա՛ է. ի՞նչ է փրկ-

կութեան պայմանը: Փրկութեան պայմաններն են:—

ա. «Ապաշխարութիւն». Մարկ. 1. 15, որ կը նշանակէ մաքով եւ գործքով հիմնական փոփոխութիւն մը մարդուն մէջ, իր ընկերով եւ Աստուծոյ հանդէպ: Բ. «Հաւատք», Ղուկ. 7. 36-50, Մատթ. 15. 21-28, Ղուկ. 17. 1-10 որ կը նշանակէ կատարեալ վստահութիւն Արարչին հանդէպ:

գ. «Վերստին ծնիլ», որ ապաշխարութեան ու հաւատքի արդիւնքն է, «նոր» կեանք մը, որովհետեւ, հոս անհատը իր մեղաւոր բնութեան ձեռքէն ազատուած է: Այս կեանքը աստուածային շնորհք մըն է, նոր խնորոյ ծնունդ մը, նոր կենցաղ մը, որովհետեւ անհատը այլեւս կը լքէ իր կոշտ եւ սնոպայ բնաւորութիւնը եւ կ'սկսի սիրոյ կեանքը ապրիլ:

դ. «Մաքրագործում», որովհետեւ, անհատը իր բացարձակ դատաւորին հետ հասկացողութեան մը եկած է:

ե. «Որդեգրութիւն», Գաղ. 4. 4-5 Ղուկ. 15. 11, Մատթ. 5. 45, Յովհ. 15. 12: Մեղաւորը՝ ա'լ Աստուծոյ ընտանիքին հլու զաւակը կը դառնայ: Այո՛, թէեւ զղջման չեկող մէկն ալ Աստուծոյ սրգին է, բայց, Անասակ Որդին:

զ. Սրբազործում, որ վերը յիշուած նոր կենցաղին արդիւնքն ու շարունակութիւնն է: Ահա այս վեց տեսակ դրութիւնը կամ կացութիւնը «փրկութիւն» կոչուած է Ս. Գրոց մէջ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Քրիստոս աշխարհ եկաւ որ մեղքին անէծքը օրհնութեան փոխէ եւ մեղ փրկէ. որովհետեւ աշխարհ եւ բոլոր բնութիւնը այդ փրկագործումին կարօտ էին: Այսպէս՝ Քրիստոս մեղ փրկեց որ, մեր միջոցով ամբողջ աշխարհ փրկուի: Ուրեմն կ'սկսեալով որ մարդկային ընկերութեան կենցաղը փոխուի. ուստի եկեղեցին ընդհանուր ծրագիր մը

յօրինելու եւ զայն կիրարկելու է, համայն մարդկութեան փրկութեան համար:

Անհատին բարոյական եւ ընկերական բնութեան մէջ առաքինութիւններ կան որոնց գլխաւորները՝ Գաղ. 5. 22ին մէջ «հոգւոյն պտուղները» կը կոչուին: Այս առաքինութիւններէն են՝ սէրը, զուարթութիւնը, խաղաղութիւնը, հեղութիւնը եւ ինքնագոյնը: Ասոնք բոլորին համար են եւ կիրարկելի՝ ընտանիքի, պետութեան, աշխատանոցի կամ առեւտրական կեանքի մէջ, աւելին տեղ, որովհետեւ. 1. Քրիստոսի վարդապետութեանց մէջ զլիսաւոր առաքինութիւնը եւ բոլոր առաքինութեանց աղբիւրը սէրն է, իսկ առօր հակառակը սատանային գործերն են — վէճը եւ քեմախնդրութիւնը: Մատթ. 22 34-40: 2. Սէրը՝ ըստ Յիսուսի՝ կրօնքին չափանիշն է. Մատթ. 7. 21, 11 20: 3. Յիսուսի համաձայն՝ անհատը պարտի ա՛յնքան սիրել իբր ընկեր արարածը, ո՛րքան պարտի սիրել իր Աստուածը. Մատթ. 22. 39, Պողոս ալ կ'ըսէ, դրացիին հանդէպ սէրը, կ'առաջնորդէ մեզ սիրելու զԱստուած. Գաղ. 5 14: 4. Քրիստոսն էական սէրը շատ ընդարձակ սահման ունի, այն ո՛չ միայն ընտանիքը, եղբայրակցութիւնը եւ բարեկամները կը պարփակէ իր մէջ, այլ նաեւ թշնամիները իր շրջանակին մէջ կ'առնէ: 5. Սէրը բազմազան առաքինութիւն մըն է եւ զինքը կազմող տարրերէն մին հեղութիւնն է: Սէրը՝ մարդու մէջ աստուածային վիճակ մըն է: Ուէտ ազգի մը նախագահը չի կրնար յաջողիլ, եթէ բարեկամութեամբ, ազնուութեամբ, գութով եւ բարեկամեցողութեամբ տոգորուած չէ իր հոգին: Այսօր ընդունուած ճշմարտութիւն մըն է որ՝ սրտին աղօթեցութիւնը աւելի հզօր է քան մտքինը եւ կամքինը: Սէրը՝ մինչեւ անասունները կը տարածէ իր թեւերը:

Անասնապաշտպան օրէնքները Անգլիոյ մէջ 1822ին, իսկ Ամերիկայի մէջ 1922ին պաշտօնապէս ընունուեցան:

Սիրոյ եւ հեղութեան հետ կ'ընկերանան նաեւ քաղաքավարութիւն, անկեղծութիւն, հանդուրժողութիւն, անոխակալութիւն եւ հաւասարութիւն: Հանդուրժողութիւնը (Tolerance) դէմ է հստակաշտութեան, կուսակցամոլութեան եւ շրտեցութեան եւ եթէ այս առաքինութիւնը ճշմարտապէս կիրարկուի, աշխարհ բոլորովին կը կերպարանաւ փոխուի:

Նոր կտակարանը իրապէս ճանչցնէ մարդկային բոլոր զգացումները, բայց ցեղային, ընտանեկան, պետական եւ ազգային կապերու տեղ եղբայրակցութեան տեսլականը կը պահանջէ այն որովհետեւ եղբայրութեան գաղափարակարն է որ պիտի ջնջէ միւսներու ստեղծած խտրութեան ոգին:

(ՎԵՐ.) Թ. ՇՆՈՐՀՅՈՔԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

5. Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՐ

6. Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Բ.

2. Գործակցական կեանք եւ ազգային անցուցարձեք: Այս մասին մեր քննիչները չ'ոչնած՝ լաւ պիտի ըլլայ շրջանին նախընթաց ազգային — քաղաքական կեանքին վրայ ակնարկ մը նետել, հասկնալու համար այդ շրջանին Հայաստանի կոչութիւնը: Այդ օրերը՝ (396) խորամանկ պարսիկ եւ նենգ յոյն արքունիքները համաձայնած եւ Հայաստանը իրենց մէջ բաժնած էին, մեծագոյն մասը Պարսից ձեռքը մնալու պայմանով: Ժամանակին թագաւորը Արշակ Գ. չուզելով տարսիկ հեթանոս թագաւորին ճորտ մը ըլլալ, շատ մը նախարարական ընտանիքներով յաւանական բաժինը գողցեց:

Այս տեսնելով՝ Շապուհ — Պարսից թագաւորը — ստիպուեցաւ խոստով Գ. Արշակունի իշխանը թագաւոր կարգել Հայաստանի պարսկական բաժնին վրայ և հարաւիրել գաղթող նախարարները՝ դառնալ հայրենի գաւառը, բայց տպարդիւն։ Այսպէս՝ Հայաստան երկու մասերու և երկու թագաւորութիւններու բաժնուած, պատճառներ ալ գտան անոնք իրարու հետ կռուելու, բայց քիչ վերջ Յուայ բաժնին թագաւորը Արշակ մեռաւ (399) և ասպարէզը մնաց խոստովի։ Խոստով համոզեց յոյն արքունիքը որ այդ բաժնին վրայ ալ թագաւորէ ինքը, ինչ որ շնորհուեցաւ իրեն և Յոյներու թելադրութիւմը՝ Ս. Սահակ Պարթեւ ալ հայրապետական գահ բարձրացաւ, իբր յունասէր և յունական քաղաքականութեան կուսակից անհատ մը։ Ս. Սահակի հայրապետ անուանուած եւ խոստովի յոյն արքունիքին հետ վարած քիչ մը անխոհեմ սիրարանութիւնները՝ Պարսից կասկածը զրգռեցին, որով Շապուհ գահազրկեց զայն, նոյնպէս կախակայելով Ս. Սահակի կաթողիկոսութիւնը, որ առաջին օրէն փուշ մըն էր իր աչքին։ Խոստով աքսորուեցաւ Խուժաստանի խորերը (Պարսկաստան) Անոյշ բերդը և տեղը անոր եղբայրը Վռամշապուհ թագաւոր կարգուեցաւ (400) որը՝ 21 տարի խաղաղօրէն կառավարեց երկիրը, և իր գահը թաղմելուն պէս Ս. Սահակն ալ կրցաւ բազմեցնել աթոռ։

Ահա Վռամշապուհի գահակալութեան օրերուն էր որ, Ս. Մեսրոպ կը գիմեր Ս. Սահակի, զրի գիւտին համար հնարք մը խորհելու, խկ հայրապետը յարմար կը գտնէ թագաւորին ներկայութեամբ զուարթուած ժողովի մը մէջ հարցը քննել։ Վռամշապուհ այն ժողովին մէջ կը յայտնէ որ՝ քանի մը տարի առաջ Միջագետքի Հաբել անուն քահանայ մը իրեն յիշած էր թէ՛ այդ երկրին մէջ Դանիէլ անուն Ասորի կղերի

մը քով Հայ գիրեր կը գտնուին։ Ժողովի որոշումով հայ իշխան մը՝ Վահրիճ՝ Միջագետք կ'իջնէ, Հաբելը կը գտնէ և միասնաբար կը գիմեն Դանիէլի, որը իրենց 29 գիրեր կը յանձնէ (ըստ ոմանց 22) բայց մէկ քանի փորձեր ցոյց կուտան որ, այդ գիրերով կարելի չէր հայերէնը հնչիլ և գրել, քանի որ ձայնաւոր գիրերը կը պահսէին։ Ասոր վրայ Ս. Մեսրոպ անձամբ կը զրկուի Դանիէլի մօտ, որ քանի մը աշակերտներով կը հասնի հոն... բայց նոր շահ մը չ'աւելնար այս երկրորդ յոգնութենէն։ Դարձին՝ Եղիսիա (Ուրֆա) կը հանդիպի, ուր կը գիմէ հռետոր Պղատոսի, բայց անօգուտ։ Քովի աշակերտները Եղիսիա կը թողու որ զըպրոց յաճախեն եւ ինքը յուսալքուած զառնալու ատեն՝ Պղատոս կը յանձնարարէ Ս. Մեսրոպի որ իր վարպետը Եպիփանոսի գիմէ—ի Փիւնիկէ (Պէյրութի շրջանը)։ Մեսրոպ կը հասնի հոն եւ ցաւով կ'ամանայ Եպիփանոսի մահը, կը յանձնարարուի իրեն գիմել անոր Հռուփանոս անուն աշակերտին՝ որ Սամաստ—(Շամշատ) կը գտնուէր, քաղաք մը՝ Եղեւիտի հիւսիս արեւմտեան կողմը, Եփրատի վրայ։ Ճարահատ հոն ալ կ'շտապէ, բայց անկէ ալ չի կրնար օգտուիլ, որով մարդկային օգնութենէ յուսահատ և աստուածային օժանդակութեան ապաւինած՝ կ'սկսի աղօթքի և աղաչանքի յանձնուիլ։

Բովանդակէութիւնովը յափշտակուած այս միակ տեսլականով կը գիմէ երկնային անսպառ շնորհքի աղբւրին և ինչպէս կը վկայեն հայ պատմիչներ, որ մը աղօթքի և յափշտակութեան ընկալէի մը մէջ «Ոչ ի քուն երազ և ոչ արթնութեան տեսիլ», այսինքն ձեֆի երկնային յուսալորութեամբ մը, ինչպէս կը յիշէ հմուտ Գէորգ Մեսրոպ, անհրեւոյթ թաթի մը կամ ոյժի մը կողմէ լարուած, իր մատները կ'սկսին հնարել եւ գրել բաղձացուած ձայնաւոր գիրերը զոր կը

ներկայացնէ Հռուփանոսի, դասաւորելու և վայելուչ ձև մը տալու համար: Սուրբին առաջին գործը կ'ըլլայ թարգմանութեան փորձ մը ընել Առաւելաց Գրքին վրայ և երբ կը տեսնէ իր յաջողութիւնը, ուրխութիւնէ խելայեղած՝ կը վազէ Հայաստան և կ'ընդունուի Ս. Սահակի և Վռամշապուհի կողմէ, խանդավառ օրտազեղումներու մէջ (404):

Տարիներով միակ գաղափարական մը հետապնդող և իր ամբողջ էութիւնը անոր մէջ մխրճուած չատ մը ժամանակակից գիտնականներ՝ մեծ մեծ հնարքներ և զիւտեր կը նուիրեն մարդութեան, սկսած չափի, երեքարականութեան վերաբերեալ գիտերէ, մինչև մեր օրերու անհաւատալի արագութիւնները և ապա՝ չեցուցիչ օգտակար ճախրանքներ կատարող մեքենականութիւնը: Եթէ հրաշագործի դիւթական մականին ալ չհաւատան ոմանք, մենք Ս. Մեսրոպը կրնանք նկատել՝ նուիրուած և մտասեւեռ յափըշտակուած իրական հնարիչ մը, որ իր ջանքերուն շնորհիւ փրկեց հայ ազգն ու եկեղեցին — քրիստոնէայ կրօնը, ձուլումի անխուռափելի վտանգէն, տրուած ըլլալով քաղաքական ներքին և արտաքին խիստ ողորմելի զիճակ մը, որուն մէջ կը տուայտէր արդէն Հայաստանի ազգուն գահը: Հայ լեզուն վերականգնանքներով Մեսրոպ՝ Հայ կրօնը վերականգնողացուց, հոգեւոր արթնութեան նոր ուղի մը բացաւ: Ազգը կրօնականացաւ և կրօնը ազգայնացաւ:

Ս. Մեսրոպ ալ մարգարէ մըն էր, որ ոչ թէ միայն ասպագայի անսուղորքիւնը և մոյպոքիւնը գուշակեց, այլ այդ շրջանին իր ընկիւնը գիտցաւ, և մեծագոյնը բոլոր մարգարէներու մէջ, այս տեսակ իրատես մարգարէն է: Կատարուեցան իր զուշակութիւնները, քանի մը տասնեակ տարիներ վերջ. քանի որ 432ին վերջնականապէս ջնջուեցաւ գժրախտաբար Հայ խախուռ գահը և 451ին Հայ կրօնը

կրեց ամէնէն ահաւոր յարձակումը: Բայց շնորհիւ Ս. Մեսրոպի կէս դար առաջուրնէ մղած կանխատեսողի հսկայ ճիգերուն, փրկուեցաւ ազգին կրօնը՝ որ ոչ թէ իր գոյնը կամ շղարը դարձած էր, այլ իր ոսկորն և կաշին եղած էր այլևս: Ձուլումը չկրցաւ իր կլափին մէջ ընկուել Հայ ազգը, որովհետեւ այն լեզու մը ունէր արդէն, իբր հզօրագոյն գէնգին քնապաշտպանութեան և իր կրօնքը — քրիստոնէութիւնը այլևս ասորերէնի և յունարէնի պէս փոխ առնուած լեզուներով չէր որ կը փառաբանուէր Հայ տաճարի կամարներուն տակ: Հայը այլևս գիտեր թէ զո՞վ կը պաշտէր:

Յաջորդ յօդուածով պիտի տեսնենք Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը իրենց խական և նախախնամական դերին մէջ: Հալեայ ՌԵՏՈՒՆԻ

ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ՊՈՒՆՈՍ-ԱՅՐԷՍԻ ՄԷՋ

1930 Փետր. 23ի Կիրակին, Պուէնոս Այրէսի Հայ Աւետ. համայնքին համապատմական օր մը եղած է: Նոյն օրը՝ Վեր. Հայկ Ատատուրեանի առաջնորդութեամբ ու տեղացի և հայ հոգեւորականներէ բաղկացած վեց հոգինոց եկեղեցական ժողովի մը մասնակցութեամբ, տեղւոյն Հայ Աւետարանական եկեղեցին կազմուեցաւ: Վեր. Հ. Ատատուրեան 1930ի Յունվարէն ի վեր մեր մէջն է և բոլոր հռանգովը կը ջանայ հոգեւորապէս մխթարել և ոգեւորել մեզ:

Գոհութեան երգէն վերջ, Վեր. Հայկ կարճ աղօթք մը ըրաւ, որմէ ետքը Հայ Առաքելական եկեղեցւոյ հովիւը՝ Յովհաննէս քահնայ. Ամբաստան «Հայր մեր» մը ըսաւ: Յետոյ Վեր. Հ. Ատատուրեան նախ՝ հայերէնով և ապա թրքերէնով կարդաց Ա. Կորնթ. 12. 12-31 համարներ

բը: Անկէ վերջ՝ նոյն կտորը անգլիերէնով կարդացուեցաւ նաեւ Վեր. Բուլի կողմէ, որ տեղւոյս Գերման եկեղեցւոյ հովիւը ըլլալով, գաղթականաց մարզին մէջ կը գործէ: Երբ ընթերցումը վերջացաւ, Վեր. B. Fostea Stockwell անգլիերէնով աղօթեց: Յիշեալը տեղւոյս Մէթոտականաց հովիւը և Աստուածաբանական ճեմարանի տնօրէնն է: Յետոյ բեմ բարձրացաւ՝ 70 ամեայ Վեր. Պրատունիկ, որ Արժէնթինի Աւետ. Յարանուանութեանց Գործակցական Յանձնախումբին նախագահն է: Վեր. Պրատունիկ՝ նորակազմ եկեղեցւոյ անդամներուն ուղղուած կարճ յորդորներ ըրաւ և յանձնարարեց որ նախ՝ եկեղեցւոյ լիզուն շուտով Սպանիերէնի դարձնեն և այս, ըսաւ անիկա, Ձեր զաւակներուն սիրոյն համար: Ասիկա շատ գործնական խրատ մըն էր, որովհետեւ, նոր սերունդը ոչ հայախօս կը դառնայ, ոչ թրքախօս, ոչ ալ հայերէնագէտ պիտի ըլլայ: Եթէ կը փափաքինք որ անոնք կորսուածներ չըլլան Աւետարանի և Յիսուսի նկատմամբ, անոնց համար ամէնէն լաւ հասկցուած լեզուով սորվեցնելու ենք Աւետարանը: Հակառակ պարագային՝ կրօնքի և Աստուծոյ հանդէպ անտարբեր ժողովուրդի մը մէջ եւ հասարմատ կաթոլիկ եկեղեցւոյ քովը ի վեր մեծցող հայ Աւետ. համայնքը, շուտով պիտի մոռնայ իր նախահայրերէն ժառանգած Աւետարանը և այս երկրին համար օրհնութիւն մը չպիտի ըլլայ: Երկրորդ, ըսաւ Վեր. Պրատունիկ, զանազան հոսանքներէ քշուող բոլոր հայ Աւետարանականները կալու եւ այս եկեղեցիին միամտաբար են: Բոլորը միաբանելու եւ մեծ եկեղեցի մը կազմելու են: Ամէնէն վերջ՝ Վեր. Մօնթկոմբիի աղօթքով վերջացաւ այս ժողովը: Այս վերջինը Յիսուսի Աշակերտներ (Disciples of Christ) ուխտին քարոզիչը և Աստուածաբանական ճեմարանի վարչական անդամներէն

է: Այս օրուան համար կազմուած երկսեռ պատանիներու երգչախումբը, պաշտամունքին փայլը աւելցուց. զոր ղեկավարեց Պ. Միհրան Չալըգեան, ընկերակցութեամբ Տիկ. Փրլանթի Մնչերեանի որ դաշնակ նուագեց:

Եկեղեցին կազմող հիմնադիր անդամներուն թիւը 90 էր, որոնց 70ը հայրենիքի մէջ ժամանակաւ զանազան եկեղեցիներու անդամակցեր էին արդէն, իսկ ներկայիս ասոնց վրայ 20 նորակիրներ կ'աւելնային:

Հետեւեալ օրը՝ մօտ 30 հոգիներու մասնակցութեամբ ընթրիքի սեղան մը սարքուեցաւ, Երիտ. Բ. Ընկ. Կան սրահին մէջ, ուր ներկայ էին տեղացի եւ անցիւրացի բարեկամներ: Սեղանին կը նախագահէր Վեր. Հ. Ատատուրեան. ներկաներու մէջ՝ մեր հիւրերն էին հետեւեալները. Արժ. Յովհ. քհնյ. Ամիրաթեան, Վեր. և Տիկ. Պրատունիկ, Վեր. եւ Տիկ. Մօնթկոմբի, Երիտ. Բրիտ. Ընկ. Կան ատենապետ՝ Մր. Շուսան, Ս. Կրօնց անգլիական և օտար ընկերութեանց ներկայացուցիչը՝ Մր. Նիյոմ եւ Գերման եկեղեցւոյ հովիւը Մր. Գուլ:

Վեր. Հայկ Ատատուրեան յայտարարեց որ, Հայերս՝ հակառակ մեր կրած դառն հալածանքներուն և տառապանքներուն, միշտ լաւատես ազգ մը եղած ենք և իթէ խնդիր մը միայն մեկ փայլուն երես ունենայ, մենք այդ երեսը տեսնելու կը ջանանք: Յետոյ գովասանքներով շնորհակալութիւն յայտնեց Վեր. Պրատունիկի, որ խօսքը բոլորիս ուղղելով ըսաւ. «Սիրով չըջապատեցէք ձեզի գալիք հովիւը և ձեր բոլոր ոյժով գօրավիկ հանդիսացէք անոր, ընդունեցէք, սիրեցէք զայն, օգնեցէք անոր եթէ ան ձեր փափաքածէն պակաս ՈՒՂՂԱՓԱՌ գտնուի. և դարձեալ սիրով ընդունեցէք զայն իթէ ձեր փափաքածէն աւելի ՈՒՂՂԱՓԱՌ ըլլայ ան: Մր. Գուլ սուպէս ըսաւ: Ամէնէն լաւա-

տես անձը Յս. Քրիստոս է. ամէնէն անկեղծ բարեկամն է ան. բարեկամնե՛ր, Անոր հետ բարեկամ եղէք: Քրիստոնեայ բարեկամներ կրնան մեզ յուսախաբ ընել, կրնան մեզ խաբել. բայց Տէր Յիսուս միշտ հաւատարիմ է, երբեք մեզ չի խաբեր:» Mr. Neve յատյնելէ ետքը թէ Հայերը ուշիմ և գեղաչուի ժողովուրդ մ'են և թէ իր լաւագոյն բարեկամներէն ոմանք Հայեր են յարեց. «և սակայն Հայերն ալ Անգլիացիներու նման ապաշխարութեան կը կարօտին: Ս. Գրքի Ընկերութիւնը պատրաստ է ձեզի աժան գիներով տաճկերէն և հայերէն Ս. Գիրքեր ծախելու:» Սր. Շուժման ըսաւ թէ այս եկեղեցին կանգուն է Քրիստոսի սէրն ու կարեկցութիւնը գործնականապէս ցուցնելու անոնց որ օգնութեան կը կարօտին: Արժ. Տ. Յովհ. Հայր յիշելէ ետքը թէ Հայ Առաք. Եկեղեցին ուրիշ եկեղեցիներու հետ միշտ հաշտ ապրած է աւելցուց. «Տէրոջ կամքն է որ զանազան եկեղեցիներ գոյութիւն ունենան, բայց Ան կը կամի նաեւ որ իրարու հետ սիրով ապրինք եւ համաձայնութեամբ գործենք:» Վեր. Մօնթկօմբի մի քանի բառերով շնորհակալութիւն և կարեկցութիւն յայտնեց: Իսկ Տիար Թորոս Նալչաճեան մեր բոլորին կողմանէ շնորհակալութիւն յայտնեց միսիօնար բարեկամներուն:

Մի քանի բառ ալ Վեր. Հայկ Ատատուրիանի մասին: Բնիկ Այնթապցի Պատուելի Ատատուրին զաւակն է, 40 տարիէ ի վեր Մ. Նահանգաց մէջ կը զբոսնուի, 35 տարի ամերիկեան (Եանքի) եկեղեցիներու մէջ իբր հովիւ գործած է: Անոր խորհելու և քարոզելու կերպը մեր հին հովիւները յիշել կուտայ: Հեզ, խոնարհ, պարզ հաւատացեալ մը, որ իբր հովիւ ջանքի մէջ չի թուլնար: Շատ կորովի մէկն է, իր տարիքին հակառակ՝ անխոնջ աշխատող մըն է: Շատ պարզ թրքերէնով մը կը քարոզէ. ասիկա բա-

րեմասնութիւն մըն է, քանզի նոր սերունդը զբաղան թրքերէն չի գիտեր: Հայերը Պուէնօս Այրէսի բնակչութեան ծանօթացնելու համար Buenos Aires Herald անգլերէն թերթին մի քանի շատ գեղեցիկ յօդուածներ զրկեց, որոնց բոլորն ալ հրատարակուեցան: Երբ արդիապաշտութեան և հիմնապաշտութեան մասին իր կարծիքը հարցուցինք սապէս պատասխանեց. «Ես այս հարցերը իմ բեմիս նիւթը չեմ ըրած, և իմ ժողովըրդիս զանոնք չեմ ներկայացուցած: Ես անձամբ այս բառերու մասին խորհիլ չեմ ուզեր: Ս. Գիրքը Աստուծոյ խօսքն է:» Փառք կուտանք Աստուծոյ որ մեզի այսպիսի հովիւ մը զրկեց և շնորհակալութիւն կը յայտնենք Հայ Աւետչ. ի անգամ եղբայրներուն, իրենց այս ընտրութեան համար:

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Յաճախ կը պատահի որ երկարատեւ անձրեւէ ետքը, մինչ տակաւին երկնակամարը քօղարկուած է մութ ամպերով, մէկէն անոնց կուտակումներուն կտրատուած միջոցներէն անձրեւի մէջէն զիւթական ճառագայթներ կը փայլին այնպիսի գեղեցկութեամբ մը որ մարդ տմենաստիպողական գործն իսկ թողով կ'ուզէ գիտել զայն: Նման հմայիչ պատկերներուն շատ անգամ կը հանդիպինք մարդկային կեանքին մէջ ևս:

Որդեկորոյն Յակոբ տարիներով վըշտի ծանրութեան տակ կ'ըսէ, աչքերը միշտ թաց, անակնկալ կերպով իր ամենասիրելի զաւակին ողջութեան լուրը առած պահուն երբ գեղուն ուրախութեան ժպիտը իր արցունքներուն մէջէն ցուլաց՝ չկազմուեցա՞ւ յանկուցիչ ծիածան մը:

Այս օրերս մեր միտքը զբաւող Մագդաղենացի Մարիամը որոշ օրինակը կ'ըլլայ անակնկալի: Մի քանի օրէ ի

վեր զինք մեղաց բեռէն ազատող Փրկիչը կորուսած՝ կը խոկար, կ'արտասուէր ու կը փնտռէր, ըմբռնած չըլլալով Անոր տուած յարութեան յոյսերն ու քաջալերականները. և կուգայ գերեզմանին մօտերը մխիթարութիւն գտնելու յոյսերով: Մէկշաբթի առաւօտուն կանուխ կը վազէ ընկերուհիներուն հետ խունկով հոտաւէտելու հասարակներէն տարբեր եղող զարմանալի մարդուն գերեզմանը, որպէս յարգանք՝ անոր և յագեցում իր սիրոյն: Սակայն ինչ դառն վշտի՝ կը փոխուի հոգը, երբ կը տեսնէ թափուր շիրմը հրեշտակներու հսկողութեան տակ, կը նայի աստ անդ, կը փնտռէ անընդհատ և յուսալքուած կ'երթայ գերեզմանին դուրսը ու կուլայ: Կրկին կը դառնայ մէջը նայելու ու երբ կը տեսնէ թէ լալը անօգուտ է, ուրիշ քայլ կ'առնէ: Դիմում կ'ընէ հրեշտակներուն անոնց հետ խօսակցութեան կը բռնուի. երկրաւոր կիներ երկնայիններու հարցմանց կը պատասխանէ, ինչ վսեմ պատկեր: Արեմաթացիին գերեզմանը զարմանահրաշ վայր մը դարձած էր, հոն աննախընթաց դէպք մը տեղի կ'ունենար. մեռեալը չկայ, հրեշտակներ դամբանին կը հսկեն ու անոք կին մը ուրտի անհուն կսկիծով կը փաստէ զինն որ շիրմին մէջ ըլլալու էր: Մինչդեռ նա կենդանացած՝ խեղճ կնոջ ետին կայնած կը լսէ անոր խօսքերն ու կը տեսնուի նոյնհետայն և որպէս անծանօթ մը խընդրոյն՝ կը հարցնէ. «Կնի՛կ, ինչո՞ւ կուլաս, ո՞վ կը փնտռես»: Ինչո՞ւ արդեօք առաջին առիթով ինքզինքը չի յայտնէր: Բայց մենք լսենք Մարիամին ազաչանքը. «Տէ՛ր, եթէ գուն վերցուցիր անիկա, ըսէ՛ ինծի ու՞ր դրիր զայն, որ ես անիկա առնեմ» կ'ըսէ նա՝ յարուցեալը պարտիզպան կարծելով: Վերցուած Յիսուսը իր կենդանութեան խօսքերը, խոտուումները և քաջալերականները յիշեցնելու համար միայն մէկ բառ կ'ըսէ,

«Մարիա՛մ»: Արդէն ճանչցուած էր և զիմացինը զգացուած՝ նոյնպէս իր «Ռաբբունի» գոչելովը կ'ազդարարէ իր ամէն ինչ հասկնալը: Հոգիի գորովով լեցուն կը թափէ իր սրտէն յուզմուքը ու աչքերէն ուրախութեան արցունքը: Երբ փոթած մէկ վայրկեանին ինչ ընելը չգիտնալով զայն բռնել կամ զարմանքը յագեցնելու համար փարիլ կ'ուզէ, սակայն կը մերժուի: Անառակ որդիին հայրը իր զաւկին հանդիպման ուրախութիւնը ազատօրէն ողջագութելով ապացուցուց: Մագաղէնացիին՝ զպչիլն իսկ կ'արգիլուի: Օրերով իրեն համար լաց ու ողբ ըրաւ և գտած պահուն հպում միտի իրեն չարածնոցաւ: Բայց հոգ չէ, Աստուծոյ սրբուոյն հանդիպողին աս ալ կը բաւէ, հերիք է որ իր Փրկիչը նախ ինքը տեսաւ: Իրապէս անուշ, անակնկալ հանդիպում: Մարիամ բարեբաղդ և երանելի կին սեպուելու արժանիքը չունի՞ միթէ, եթէ չէր ունենար՝ յարուցեալ Տէրը առաջին անգամ իրեն պիտի երևնա՞ր: «Փնտռեցէք ու պիտի գտնէք»: Մարիամ այս խօսքերուն իրական ըլլալը անձամբ կը փաստէ: Նա մէկ հոգ ունէր: Աւագ չաբթուն կերջին մութ օրերուն, թէ՛ ինչպէս ապերախ է մարդկութիւնը որ ասանկ բարերար, հրաշագործ, գերմարդկային անձը կը նեղէ, կը ծեծէ ու կը խաչէ: Մէկ վիշտ՝ խորհիլ թէ զինքը փրկողը գերեզմանին մէջ է և ալ չպիտի տեսնէ զայն: Մէկ մտածում՝ մեռած Տիրոջը յարգանք մը ընել: Մէկ փափաք՝ խունկով հոտաւէտել Մարգու Որդիին մարմինը: Մէկ ըղձանք՝ իր երախտապէտ սրտէն բղխած վառ ու սուրբ սէրը արցունքով մարել անոր շիրմին քով: Մէկ բաղձանք՝ անգամ մ'ալ տեսնել իր Վարդապետը: Եւ ասո մեռեալը տեսնելու յոյսերը նուազած պահուն ողջ առողջ, ասուն ու խօսուն, կենդանատիպ, յարուցեալ Ռաբբունին կը գտնէ: Եւ Անիկա զինքը

գտնողին գործ մը կը յանձնարարէ, «Գնա՛ւ և ըսէ՛» ու ի՛նչ պատուական խնայարարութիւն, «Ես կ'իլլեմ իմ Հօրս քովը ու ձեր Հօրը քովը ե իմ Աստուծոյս քովը ու ձեր Աստուծոյն քովը»։ Ասով անշուշտ շեշտել կ'ուզէ թէ ահա անյեղալի մէջ ըլլալը ըսածները կը կատարուին։

Յիսուսը սիրողներ և սիրել ու գողներ, փնտռենք զինքը միշտ ուր որ ալ ըլլանք զի Ան ամենուրեք է։ Մարիամի պէս առաու կանուխ գերեզմանը վազել հարկ չկայ, ոչ ալ այն հոգը ունենալ թէ քարը ո՛վ պիտի գտնէ։ Մեր Հայրը ամէն բան կարգադրած է. քարը գտնուած, մեռելը մահուան ու գերեզմանին յաղթած։ Յիսուս յարութիւն առած։ Իր խոստմանց հաւատարիմ, տեղ պատրաստած իրեններուն՝ կը հրաւիրէ և կ'ըսէ. «Այս ատեն երկու ընկերք կը յիշեցնէ. —Փրկիչը փնտռել՝ և գտնելէ յետոյ երթալ և ըսել ուրիշներուն. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»։

ՏԻԿ. Ա. ՇԻՐԱՃԵԱՆ

ՊԵՅՐՈՒԹԻ Ք. Զ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՓԵՏՐՈՒՍԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Փետրուար 2ի Կիրակին Զանից Ընկերութեանց Օրը ըլլալով բոլոր Ընկերութիւնները Ա. Եկեղեցիին Աղջկանց և Տղայոց կողմէ հրաւիրուած էին տօնելու սոյն օրը պատշաճ հանդիսութեամբ։ Հանգէսը տեղի ունեցաւ Հայ Ամերիկեան վարժարանի սրահին մէջ ժամը 11ին առաւօտեան պաշտամունքէն քիչ վերջ։ Սրահը լեցուած էր 300 ի չափ երկսեռ բազմութեամբ մը։ Յայտագիրը բաւական ճոխ և հետաքրքրական էր։ Օրիորդ Ալիս Պէզճեան շատ ամփոփ և գեղեցիկ գոյներով կենսագրականը տուաւ Ֆրանսիա Գլարգի, Զանից Ընկերութեանց Ամերիկացի հիմնադրին։ Որմէ յետոյ Պր. Բիւզանդ Կիւլէսէրեան գեղեցիկ պատմականը ըրաւ Զանից Ընկ. հիմ-

նուելէն մինչև մեր օրերը կատարած գործին և կտրած ուղիին։ Օրիորդ Մանիշակ Գաղանճեան տեղեկութիւններ տուաւ Ընկերակցութեանց յանձնարարութեան գործունէութեանց և պատահանութեանց մասին ամփոփ կերպով։ Վերջին խօսողն էր Պր. Ե. Տէր Մկրտիչեան Վիշնչ ըրաւ Զանից Ընկերութիւնը ինծի»։ Նիւթին շուշ, Եւ այդ օրուայ յոյժ օգտակար ժողովը վերջացաւ Վեր. Ե. Կէօքկէօղեանի աղօթքով։

Յիրաւի ուրախալի և քաջալերական է տեսնել մեր երկսեռ երիտասարդութիւնը հոգեւոր գործի մէջ նետուած և մանաւանդ իրենց խի բերնէն լսել հոգեւոր պատգամներ։ Նոյն Կիրակին իրապէս Զանից Ընկերութեանց օր մը եղաւ Պէյրութի համար, քանի որ առտուան պաշտամունքին ալ Վեր. Կէօքկէօղեան իր քարոզի նիւթ ընտրած էր «Երիտասարդութիւնը»։ Այս առթիւ կ'ուզենք նաև յիշել որ Ա. Եկեղեցիի Զ. Ընկերակցութիւնները գեղեցիկ գաղափարը յաւցած էին այդ օրուան առթիւ նուիրել գեղեցիկ նստարան մը եկեղեցիի բնմին համար։

Փետրուար ամսուան երկրորդ ուշադրաւ գործունէութիւնը տեղի ունեցաւ ամսուն 29 Դէ. օրը իրիկուան ժամը Զին Բէմըի Աւետարանական Եկեղեցիին մէջ։ Յաջորդօրը Վարդանանց Զօրավարաց օրը ըլլալով Պէյրութի Զանից Ընկերութեանց Տեղական Միութիւնը որոշած էր այս մեծ Օրը պատշաճ և վայել հանդիսաւորութեամբ տօնել։ Եկեղեցին նոյն խի ժամանակէն առաջ լեցուած էր երկսեռ խումբ բազմութեամբ մը։ Հանգէսին յայտագրին մաս կը կազմէր օրուան յատուկ երգեր որ երկու Զ. Աղջկանց Ընկերութեանց կողմէ երգուեցան ներդաշնակ կերպով։ Քէմըի աղայոց Ընկ. մասնակցեցաւ նուագով մը և Պր. Բ. Կիւլէսէրեան մեներգեց Վալից Ամպիրը»։ Պր. Յ. Պ. Պուճիքեան արտասանեց

Վարդանի ճառը: Յայտագրին մնացած մասը կը կազմէր երկու բանախօսութիւններ, մին Պատ. Յ. Արզարեանէ իսկ միւսը Պր. Պ. Յակոբեանէ: Պատ. Արզարեան խօսեցաւ Թրքերէն լեզուով քանի որ ներկաներէն մաս մը Հայերէն չէր հասկնար: Իր նիւթն էր «Վարդանի Պատմութիւնը», որ շատ հետաքրքրական կերպով ներկայացուց պատմելով զանազան դրուագներ Վարդանի կեանքէն. որմէ յետոյ Պր. Պ. Յակոբեան ալ արժէքաւոր խորհրդածութիւններ ըրաւ խօսելով «Վարդանանցի Պատգամը Մեզի» նիւթին շուրջ:

Այս երկու ընդհանուր հանդէսներէն պատ Զանից Ընկերակցութիւնները իրենց կանոնաւոր շաբաթական գործունէութիւնները շարունակած են լռիկ և կանոնաւորաբար: Լիայոյս ենք որ երկտասարդական այս շատ օգտակար կազմակերպութիւնը եւ շարժումը պիտի քաջալերուի թէ մարդոցմէ եւ թէ ալ Աստուծմէ որպէսզի այն կարենայ իրեն վերապահուած խիստ օգտակար դերը կատարել:

Պէյրուքի Բ. Ջ. Ընկերակցութեանց
Տեղակալ Միռքիւն

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազգայնականութիւն Չարլս Տիքընսի
գրուածներէն

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈԳԻՆ

Ծնունդ էր, և Ոգին Սքրուճի հետ միասին տնէ տուն կը պտտէին, իրենք ամէն մարդ կը տեսնէին, սակայն ոչ ոք կրնար զիրենք տեսնել: Կ'երթային միասին... և յանկարծ կանգ առին զրան մը առջև, ասիկա Սքրուճի զրազիրին տունն էր. արդեօք ինչո՞ւ ոգին կ'ուզէր հոն մտնել, միթէ անո՞ր համար

որ ինք բարի, ազնիւ ու համեստ սիրտ մը ունէր մասնաւորաբար աղքատներու հանդէպ, կամ թէ անո՞ր համար որ իր գորութիւնը կ'ուզէր ցուցնել:

Ներս մտան, Ոգին իր խորհրդաւոր հեղուկը սրսկեց Պօպ Բրէչիթի չորս աղքատիկ սենեակներուն մէջ, և օրհնեց այդ անուշիկ չքաւոր ընտանիքը, որոն տպուտաւոր միակ միջոցը շաբաթը այն տասնըհինգ շիլլինն էր զոր Պօպ կ'ըստանար Սքրուճէն:

Առաւօտ էր, Տիկին Բրէչիթ ելաւ տնիդէն, հագաւ իր շրջագետը՝ որ հինցած ըլլալուն պատճառաւ երկու անգամ երեսը դարձուած էր, սակայն տակաւին ժամանակ մը կրնար դիմանալ. իր պղտիկ աղջիկը երկու ղահեկաննայ երիզներով նորոգած էր իր մօրը զգեստը: Պօպի որդին Պարոն Պետրոս Բրէչիթ շատ ուրախ էր այդ առաւօտ, երբ խոհանոցէն փաթաթէսին հօտը քթին հասաւ, մասնաւորաբար այդ օրուան համար ճերմակ օձիք մը պատրաստած էր իրեն. ասիկայ իր հօրը անձնական ստացուածքն էր, որը իբր ժառանգ կը փոխանցուէր իրեն և պատիւ այդ տօնական օրուան: Ուստի Պետրոս իր այս խոշոր օձիքը անցուց, և չնայելով որ անոր եղբայրները մինչեւ իր բերանը կը հասնէին, հպարտ հովեր առնելով ասպետաբար սկսաւ ճեմել, գլուխը միշտ ուղիղ բռնած, ի սրտէ երջանիկ զգալով ինքզինքը այդ բարեբախտութեան առթիւ, և ցոյց տալով իր օձիքը այդ հասարակաց ճեմեղովայրերուն մէջ՝ ուր մարդիկ փութացիր էին իրենց հագուստի նորութիւնները ցուցադրել հանրութեան:

(Շարունակելի) (17)

صاحب الامتياز و مدير المسئول
قيس قره بت هاروتونيان